Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2018 թվականի ապրիլի 25-ի N 01.1/14-2/7548-18 և Հայաստանի
Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018
թվականի ապրիլի 20-ի N 06/3-8/20298-18 ու եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի
(WWF-Armenia) կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Կովկասյան ընձառյուծի պահպա-
նությունը Հայաստանում» ծրագրի մասին» N Մ-1184-Ա (Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվա-
կանի դեկտեմբերի 22-ի N Մ-1140-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված
ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝
«Մագնոն» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501766) 2018 թվականի ապրիլի 12-ին կնքված՝
N 03/18-GE0060 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է
Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Կարճևան բնակա-
վայրում մանկական հրապարակի կառուցում՝ 3,362,000 դրամի չափով, առանց ավելացված
արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 ապրիլի 2018 թվականի N Մ-302-Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ
10-Ի N Մ-510-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի ապրիլի 26-ի համաձայնեցման թերթը, որոշում է.

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից Երևանի քաղաքային համայնքի համար՝ Արամ Մանուկյանի արձանի պատրաստման նպատակով ձեռք բերված գրանիտե սալերը (2 տեղ, 22,740 կգ ընդհանուր քաշով, 41,995 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,811,475 դրամ, «Արարատյան» ՄԿ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-510-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2018 թվականի N Մ - 303 - Ա
քաղ. երևան

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 13-ի N 01.1/14-2/6963-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 16-ի N 06/3-8/19123-18 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Լեհաստանի Հանրապետությունից Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, «Մ. Խրիմյան» թանգարանի համար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված օգափոխության համակարգի (7 տեղ, 1,786 կգ ընդհանուր քաշով 24,736.26 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,728,350 դրամ, «Արարատյան» ՄԿ) ներմուծման ծրագիրը:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 ապրիլի 2018 թվականի N Մ - 304 - Ա
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 18-ի N 01.1/14-2/7215-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 17-ի N 06/3-8/19421-18 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակելի Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, ծիսական մոմի արտադրության համար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված պարաֆինի (22,980 կգ ընդհանուր քաշով, 29,289 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄԿ) ներմուծման ծրագիրը:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 ապրիլի 2018 թվականի N Մ- 305 - Ա
քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Այբ» կրթական հիմնադրամ)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2018 թվականի ապրիլի 18-ի N 01.1/14-2/7217-18 և Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 17-ի N 06/3-
8/19429-18 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01558429) կնքված՝
ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից
իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա
որոշմամբ հաստատված (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա, դեկտեմբերի 28-ի
N Մ-1459-Ա, 2017 թվականի հուլիսի 14-ի N Մ-593-Ա, օգոստոսի 30-ի N Մ-709-Ա և
հոկտեմբերի 11-ի N Մ-877-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և
դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Եվրոշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00810471) 2018 թվականի ապրիլի 4-ին կնքված
պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղյա լվացարանների
պատրաստում և մատակարարում՝ 972,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի
հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 ապրիլի 2018 թվականի N Մ- 306 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N Մ-1172-Ա ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(Անհատ բարերար Նորայր Խաչատրյան)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 11-ի N 01.1/14-2/6719-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 12-ի N 06/3-8/18538-18 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ անհատ բարերար Նորայր Խաչատրյանի կողմից (անձնագիր՝ BA 1605555) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Անհատ բարերար Նորայր Խաչատրյանի կողմից իրականացվող «Վարազա վանքային համալիրի Աբ.Նշան եկեղեցու, դամբարանի և տապանատան վերականգնում» ծրագրի մասին» N Մ-1172-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Սիֆիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2018 թվականի մարտի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի մատակարարում՝ 1,270,833.33 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) Թաթուլ Գասպարյան Ա/Ձ-ի հետ (ՀՎՀՀ՝ 70915533) 2018 թվականի մարտի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինանյութի մատակարարում՝ 3,389,306 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Տավուշի ՃՇՇ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07800509) 2018 թվականի մարտի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինանյութի մատակարարում՝ 1,089,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 ապրիլի 2018 թվականի N Մ- 307 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի N Մ-143-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան»)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 16-ի N 01.1/14-2/7047-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 16-ի N 06/3-8/19115-18 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան»-ի 2018 թվականի ապրիլի 9-ի N 01-09-188 գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 20-ի «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի» կողմից իրականացվող «Հայ-Ռուսական համալսարանի մարզահամալիրի լողավազանի շինարարության ավարտի» ծրագրի մասին» N Մ-143-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱ



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

1.	Ծրագրի նպատակը	Արցախի Հանրապետության մայրաքաղաքում ունենալ եկեղեցի, քաղաքի բնակչության հոգևոր կարիքների բավարարման համար
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմ (ԼՂՀ, ք.Շուշի, փ. Ղազանչեցոց 68)
4.	Ծրագիրը կատարողը	Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմ ՀՎՀՀ՝ 90342753 (ԼՂՀ, ք.Շուշի, փ. Ղազանչեցոց 68)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արցախի Հանրապետության ք. Ստեփանակերտ
6.	Ծրագրի բյուջեն	28,772,485 ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի հավատացյալ ժողովուրդը
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2018 թ. ապրիլի 2-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Սուրբ Աստվածամոր Հովանի եկեղեցու տանիքի տանիքապատման, ջրամեկուսացման և ջրահեռացման աշխատանքների իրականացում 28,772,485 ՀՀ դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) արդյունքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Սուրբ Աստվածամոր Հովանի եկեղեցու տանիքի տանիքապատման, ջրամեկուսացման և ջրահեռացման աշխատանքների իրականացում 28,772,485 ՀՀ դրամ
11.	Ծրագրի իրականացման ծախսերը կազմակերպչական հետ կապված	Հեն նախատեսվում
12.	Համագործակցությունը առնչված կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Արցախի Հանրապետության կառավարության հետ
13.	Ծրագրի արդյունավետության մեխանիզմների վերահսկողության նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման համձնածրոյվի և ԼՂՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման համձնածրոյվի կողմից (կիսամյակային և ամփոփ հաշվետվություններ)



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 ապրիլի 2018 թվականի N Մ - 309 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ
«ԵՄ՝ ՀԱՆՈՒՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ
ԽԹԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 19-ի N 01.1/14-2/7293-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի ապրիլի 19-ի N 02/14/53796-18, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2018 թվականի ապրիլի 18-ի N 03/07-1/4367-18, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2018 թվականի ապրիլի 13-ի N 1/06/548-18, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 26-ի N 06/3-8/-18, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի 2018 թվականի ապրիլի 18-ի N 01/21.1/1944-18 և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիք մարզպետարանի 2018 թվականի ապրիլի 18-ի N 01/15/1971-18 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել Հայկական կարմիր խաչի ընկերության (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023) կողմից իրականացվող՝ 141,506,085 դրամ ընդհանուր արժողությամբ «Եմ՝ Հանուն երիտասարդության աշխատունակության խթանում» ծրագիրը (կցվում է):

2. Հայկական կարմիր խաչի ընկերությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եղամյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եղամյակի ընթացքում՝ նշված

ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Գևորգ Գևորգյանի, Սևակի և Գավառի քաղաքապետերին և Հայաստանի Հանրապետության Տավուշի և Գեղարքունիքի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ





Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«ԵՄ՝ Հանուն Երիտասարդության. Աշխատունակության խթանում»
ծրագիր

1. Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է բարելավել մարզաբնակ երիտասարդների շրջանում կրթության և աշխատունակության հնարավորությունները: Ունում ստանալու և աշխատանք գտնելու նպատակով կազմակերպել խորհրդատվական կենտրոններ՝ շահագրգիռ կազմակերպությունների հետ համագործակցությամբ, ինչպես նաև հետաքրքրված երիտասարդների շրջանում խթանել ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու փորձերը:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել 33 հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3. Բարեգործը	Եվրամիություն
4. Ծրագիրը կատարողը	Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՀՀՀ 00006023
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն՝ Տավուշի և Գեղարքունիքի մարզեր, երիտասարդների հիմնահարցերի ոլորտ
6. Ծրագրի բյուջեն	141 506 085 (հարյուր քառասունմեկ միլիոն հինգ հարյուր վեց հազար ութսունհինգ) ՀՀ դրամ
7. Բարեգործություն ստացողը	ՀՀ Տավուշի և Գեղարքունիքի մարզերի մոտ 4000 երիտասարդներ
8. Ծրագրի իրականացման տևողությունը	2018 ապրիլի 1-ից մինչև 2021 թվականի մարտի 31-ը
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Շահագրգիռ կողմերի հետ համագործակցության հաստատում՝ երիտասարդների աշխատունակության հիմնահարցերի լուծմանն աջակցելու նպատակով:

	1.1. Ազգային մակարդակում և մարզային՝ համագործակցությունների հիմնում և հանդիպումների, կլոր սեղան բննարկումների կազմակերպում շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների և լրագրողների հետ: Տևողությունը 2018թ ապրիլի 1- 2021թ մարտի 31 Ընդհանուր բյուջեն 10 915 770 ՀՀ դրամ 1.2. Աշխատաշուկայի իրավիճակի գնահատման և Երիտասարդների կարիքների գնահատման հետազոտություն՝ Տևողությունը 2018թ ապրիլի 1- 2018թ հունիսի 30 Ընդհանուր բյուջեն 2 494 020 ՀՀ դրամ 1.3. Մասնակցություն միջազգային հանդիպումներում՝ փորձի փոխանակման նպատակով՝ այդ թվում մասնակցություն Դանիական ԿԻ կողմից կազմակերպվող ամենամյա «Առաջնորդության ակադեմիայի» դասընթացին Տևողությունը 2018թ ապրիլի 1- 2021թ մարտի 31 Ընդհանուր բյուջեն 6 319 563 ՀՀ դրամ 2. Երիտասարդների շրջանում աշխատունակության բարելավում և համայնքային գործունեության խթանում 2.1. Տավուշի և Գեղարքունիքի մարզերում 4 երիտասարդական կենտրոնների հիմնում՝ առնվազն երեք տարով՝ ՏԻՄ կողմից տրամադրված տարածքներում, կենտրոնների կահավորում և էլեկտրոնային տեխնիկայով ապահովում: Ծրագրի ավարտից հետո՝ կենտրոնների գործունեությունը ունենալու է շարունակական բնույթ՝ հաշվի առնելով երիտասարդական հիմնահարցերին անդրադառնալու կարևորությունը, ՏԻՄ-երի հետ համագործակցությունը և կամավորների ներուժով նշված կենտրոնների կառավարումը: Տևողությունը 2018թ մայիսի 1- 2021թ մարտի 31 Ընդհանուր բյուջեն 9 219 600 ՀՀ դրամ
--	--

		2.2 100 ՀԿԸ կամավորների համար ուսուցանողների դասընթացների /թվով 48 դասընթաց/ և կամավորների կողմից մոտ 4000 երիտասարդների համար կարողությունների զարգացման թրեյնինգների /թվով 16 թրեյնինգ/ և համայնքային միջոցառումների / թվով 6 միջոցառում/ կազմակերպում: Տևողությունը 2018թ հունիսի 1- 2021թ մարտի 31 Ընդհանուր բյուջեն 37 261 959 ՀՀ դրամ 2.3. Մասնագիտական կողմնորոշման դասընթացի կազմակերպում դպրոցներում՝ ներառյալ ուսուցանողների պատրաստման դասընթացը և աշխատանքային նյութերի տպագրությունը Տևողությունը 2018թ սեպտեմբերի 1- 2020թ մայիսի 31 Ընդհանուր բյուջեն 6 524 640 ՀՀ դրամ 2.4. «Աշխատանքի տոնավաճառ» կազմակերպում՝ ներառյալ համապատասխան տեխնիկայի վարձակալություն և լուսաբանման նյութերի պատրաստում, յուրաքանչյուր մարզում մեկ անգամ՝ ընդամենը 2 «տոնավաճառ» Տևողությունը 2019թ Մարտի 1- 2021թ մարտի 31 Ընդհանուր բյուջեն 4 515 240 ՀՀ դրամ 2.5. Ծրագրի լուսաբանման նպատակով հանդիպումների կազմակերպում տարբեր ոլորտների ներկայացուցիչների հետ՝ ընդամենը 8 հանդիպում, լուսաբանող տպագիր նյութերի տպագրում և տեսանելության ապահովման նյութերի տպագրում /բաժակներ, գլխարկներ, շապիկներ, հիշողության կրիչներ, և այլն/ Տևողությունը 2018թ ապրիլի 1- 2021թ մարտի 31 Ընդհանուր բյուջեն 17 919 120 ՀՀ դրամ 3. Չեռնարկատիրական գործունեություն ծավալելու հնարավորություններին երիտասարդների մասնակցության խթանում 3.1. Չեռնարկատիրական գործունեության թեմաներով երիտասարդական ձաճարների կազմակերպում՝ յուրաքանչյուր մարզում մեկ անգամ՝ ընդամենը 2 ձաճար՝ այդ թվում նաև համապատասխան թեմաներով
		թրեյնինգներ և խմբակային խմբակային խմբակային Տևողությունը 2019թ մայիսի 1- 2020թ հոկտեմբերի 1 Ընդհանուր բյուջեն 19 072 752 ՀՀ դրամ 3.2. Ծրագրի շրջանակներում երիտասարդների կողմից ծավալած չեռնարկատիրական գործունեության լուսաբանում՝ տեսանյութերի, հոդվածների և լուսանկարների պատրաստում Տևողությունը 2019թ օգոստոսի 1- 2020թ հոկտեմբերի 1 Ընդհանուր բյուջեն 2 364 000 ՀՀ դրամ Կազմակերպական ծախսեր՝ ինչը ներառում է մարզերում իրականացվող գործունեության մշտադիտարկման ծախսեր 2 578 533 ՀՀ դրամ, վառելիքի ծախս 1 241 100 ՀՀ դրամ, հաղորդակցման իրականացման համար անհրաժեշտ հեռախոսակապի վճարներ 1 446 768 ՀՀ դրամ, աուդիոյի իրականացման ծախսեր 1 773 000 ՀՀ դրամ և աշխատավարձ՝ 17 860 020 ՀՀ դրամ Տևողությունը 2018թ ապրիլի 1- 2021թ մարտի 31 Ընդհանուր բյուջեն 24 899 421 ՀՀ դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրով նախատեսված ծառայություններն են՝ - Գրենական, գրասենյակային և ուսուցողական նյութերի ծախսեր՝ ծրագրի ընթացքում շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների և լրագրողների համար կազմակերպվող հանդիպումների, կլոր սեղան քննարկումների, 100 կամավորների համար թվով 48 թրեյնինգների, մոտ 4000 երիտասարդի համար կարողությունների զարգացման թրեյնինգների, ձաճարների կազմակերպման նպատակով՝ ընդհանուր գումարը՝ 29.000.732 ՀՀ դրամ - Ծրագրի ընթացքում շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների և լրագրողների համար կազմակերպվող հանդիպումների, կլոր սեղան քննարկումների, կամավորների համար դասընթացների սրահի վարձակալության և հյուրասիրության վճարներ՝ ընդամենը 10.915.770 ՀՀ դրամ

		- Աշխատաշուկայի իրավիճակի գնահատման և կարիքների գնահատման հետազոտությունների իրականացում 2.494.020 ՀՀ դրամ - Ճանապարհածախսի, այդ թվում թռիչքի տոմսերի և օրապահիկի ծախսեր ընդամենը 6 319 563 ՀՀ դրամ՝ հետևյալ միջազգային հանդիպումների համար. - Բոլոր մասնակից կազմակերպությունների՝ Հայկական, Բելառուսական ու Վրացական Կարմիր խաչի Ազգային ընկերությունների երիտասարդ շահառուների մասնակցություն երկու երիտասարդական ֆորումների Բելառուսի Հանրապետությունում կամ Վրաստանում - Մասնակից կազմակերպությունների երիտասարդ կամավորների մասնակցություն ամենամյա առաջնորդության դասընթացների Դանիայում - Ծրագրում ներգրավված անձնակազմի անդամների մասնակցություն ծրագրի համակարգող Դանիական Կարմիր խաչի կողմից կազմակերպվող համակարգման և արդյունքների բարելավման ուղղված հանդիպումների Դանիայում - Թվով 4 Երիտասարդական ակումբների համար 3 տարով տարածքի վարձակալություն և պահպանման ծախսեր, ներառյալ կոմունալ վճարներ 5.491.600 ՀՀ դրամ - Թվով 4 Երիտասարդական ակումբների համար էլեկտրոնային տեխնիկական միջոցների և կահույքի ձեռք բերում 3 728 000 ՀՀ դրամ - «Աշխատանքի տոնավաճառի» համար տեխնիկայի վարձակալություն 4.515.240 ՀՀ դրամ - Տպագրություն, այդ թվում ծրագրի լուսաբանման և տեսանելիության ապահովման նյութերի, բաժակների, գրիչների, շապիկների, հիշողության կրիչների, բուկետների, ուղեցույցների, մասնագիտական կողմնորոշման դասընթացների նյութերի և այլն՝ ընդամենը՝ 24.443.760 ՀՀ դրամ - Թվով 100 երիտասարդական համար առնվազն եռօրյա ճամբարների, երիտասարդների հրեշտակների կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհածախսի, զինոսական սննդի ծախսեր, ընդամենը՝
--	--	--

		29.006.280 ՀՀ դրամ - Ծրագրի շրջանակներում երիտասարդների կողմից ծավալված ծնողակադրական օգնությունների կատարմանը տեսանյութերի հոդվածների և լուսանկարների պատրաստման, ծառայություններ ընդամենը 2 364 000 ՀՀ դրամ - Ծրագրի աուդիտի իրականացման ծախսեր ընդամենը՝ 1 773 000 ՀՀ դրամ - Վառելիքի ծախս ընդամենը՝ 1 241 100 ՀՀ դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր՝ ինչը ներառում է մարզերում իրականացվող գործունեության մշտադիտարկման ծախսեր 2 578 533 ՀՀ դրամ վառելիքի ծախս 1 241 100 ՀՀ դրամ, հաղորդակցման իրականացման համար անհրաժեշտ հեռախոսակապի վճարներ 1 446 768 ՀՀ դրամ աուդիտի իրականացման ծախսեր 1 773 000 ՀՀ դրամ և աշխատավարձ 17 860 020 ՀՀ դրամ
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ Տավուշի և Գեղարքունիք մարզպետարաններ, Իջևանի, Դիլիջանի Սևանի և Գավառի քաղաքապետարաններ, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ սպորտի և երիտասարդների հարցերի նախարարություն
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տրամադրել ամսական, եռամսյակային և ավարտական հաշվետվություններ Դանիական Կարմիր խաչին՝ որպես Եվրամիության հետ առաջնային գործընկեր: Հայկական Կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է իրականացվող գործողությունների ամսօրյա կերպով: Ներկայացվելու է հաշվետվություններ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ համաձայն սահմանված կարգի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2018 թվականի N Մ - 310 - Ա
քաղ. երևան

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ԵՐՋԱՆԻ
ՍՈՍ ԳՅՈՒՂԻ ՆՈՐԱԿԱՆՈՒՅՑ ԴՊՐՈՑԻ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ 3-ՐԴ ՓՈԽԼ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 13-ի N 01.1/14-2/6962-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի ապրիլի 19-ի N 02/14/53798-18 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 17-ի N 06/3-8/19413-18 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1,300,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Սոս գյուղի նորակառույց դպրոցի կահավորման 3-րդ փուլ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝


«ՀԱՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2018 թվականի ապրիլի 6-ին կնքված N ԱՀ-Կ-08/18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գույքի պատրաստման, գնման և տեղափոխման աշխատանքների իրականացում՝ 1,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԻՐ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Սոս Գյուլի

«10» ապրիլի 2018թ.

«Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Սոս գյուղի նորակառույց
դպրոցի կահավորման 3-րդ փուլ»

ԾՐԱԳԻՐ

1. Ծրագրի նպատակը	Ապահովել մեր կողմից կառուցած Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Սոս գյուղի դպրոցի մարզադահլիճը անհրաժեշտ լրացուցիչ կահույքով
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3. Բարեգործը	Ամիատ բարերարներ, ֆիզիկական և իրավաբանական անձիք
4. Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արցախի Հանրապետություն, կրթության բնագավառ
6. Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 1.300.000,00 դրամ:

7.	Բարեգործություն ստացողը	Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Սոս գյուղի դպրոցը
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2018թ ապրիլի 06-ից մինչև 2018թ. հունիսի 06-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2018թ. ապրիլի 06-ից մինչև 2018թ. հունիսի 06-ը ԱՀ Մարտունու շրջանի Սոս գյուղի նորակառույց դպրոցի լրացուցիչ կահավորում՝ 1.300.000,00 ՀՀ դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի համաձայն թվով 30 զգեստապահարանների պատրաստում, գնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում՝ 1.300.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ԱՀ Կառավարության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

6/1





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՇՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
27 ապրիլի 2018 թվականի N Մ- 311 -Ա
քաղ. երևան

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ
ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 4 ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐԴՈՒՄ»
ՇՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 13-ի N 01.1/14-2/6960-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի ապրիլի 19-ի N 02/14/53797-18, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2018 թվականի ապրիլի 18-ի N 03/07-1/4368-18, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 16-ի N 06/3-8/19116-18 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2018 թվականի ապրիլի 18-ի N 01/21.1/1945-18 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 158,503 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքի թիվ 4 դպրոցի շենքի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2018 թվականի ապրիլի 9-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Բերդ համայնքի թիվ 4 դպրոցի շենքի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 158,503 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:


3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապե-

տության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ




Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի կողմից
«10» ապրիլի 2018թ.

Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից
իրականացվող «Տավուշի մարզի Բերդ համայնքի թիվ 4 դպրոցի շենքի վերանորոգում»
Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Օրագրի նպատակը	Օրագրի նպատակն է վերանորոգել ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի թիվ 4 հիմնական դպրոցի շենքը, որը հարմարավետ պայմաններ կստեղծի դպրոցի 154 աշակերտների ուսմանը կազմակերպելու համար:
2.	Օրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված):
3.	Բարեգործը	Հայ Օգնության Ֆոնդ
4.	Օրագիրը կատարողը	Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան 0010, Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115:
5.	Օրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ ՀՀ, Տավուշի մարզ, համայնք՝ ք. Բերդ, Նեյսոն Ստեփանյան 13: Բնագավառը՝ կրթական:
6.	Օրագրի բյուջեն	Օրագրի ընդհանուր արժեքը կազմում է 158,503 (հարյուր հիսունութ հազար հինգ հարյուր երեք) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ, Տավուշի մարզ, Բերդ համայնքի թիվ 4 հիմնական դպրոց ՊՈԱԿ
8.	Օրագրի իրականացման տևողությունը	Սկիզբ՝ 2018թ. ապրիլի 9 Ավարտ՝ 2018թ. նոյեմբերի 9

2

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Օրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել դպրոցի շենքի հիմնանորոգման աշխատանքները: Օրագրի ընդհանուր արժեքը կազմում է 158,503 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Աշխատանքների իրականացման ժամկետն է՝ 2018թ. ապրիլի 9 - 2018թ. նոյեմբերի 20: Իրականացվելիք շին-վերանորոգման աշխատանքների մանրամասն ծավալներն ներկայացված են պայմանագրին կից հավելվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) արդյունքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 158,503 (հարյուր հիսունութ հազար հինգ հարյուր երեք) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով, պայմանագիր կնքված 09.04.2018թ. Հայ օգնության ֆոնդի (ՀՀ, ք. Երևան 0010, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) և «Կանակա» ԲԲԸ (ՀՀ, ք. Վանաձոր 2022, Նժդեհի փողոց, 4, ՀՎՀՀ 06901369) միջև:
11.	Օրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Օրագիրը չի նախատեսում կազմակերպական ծախսեր:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցելու է ՀՀ Կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի, կրթության նախարարության, Տավուշի մարզպետարանի հետ:
13.	Օրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի և Երևանի գրասենյակների, ՀՀ Կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից



5/13



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 ապրիլի 2018 թվականի N Մ- 312 - Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 13-ի N 01.1/14-2/6862-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 13-ի N 06/3-4/18887-18 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից Հայաստան-Արցախ հիմնադրամի կողմից MEBS GLOBAL REACH կազմակերպության միջոցով Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ուղարկված դպրոցական ավտոբուսի (1 հատ, նույնականացման համարը՝ 4DRBUSKPXBB323364, 12,474 կգ ընդհանուր քաշով, 15,500 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 24,975 ԱՄՆ-ի դոլար, Արարատյան մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո անհատույց հանձնվելու է Արցախի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և նախատեսված է Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության համար:

2. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 ապրիլի 2018 թվականի N Մ- 313 - Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 13-ի N 01.1/14-2/6853-18 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 11-ի N 06/3-4/18444-18 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Վարդան Կիրոպի Կիրոյանցի (անձնագիր՝ N 03 05 546287, տրված՝ 07.09.2004թ.) կողմից ուղարկված Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված շինարարական ապրանքների (1 կոնտեյներ, 17,028.22 կգ ընդհանուր քաշով, 469,255.90 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, ԵՏՄ բեռ) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո անհատույց հանձնվելու է Արցախի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և նախատեսված է Մարտունու շրջանի «Հայկական գյուղերի զարգացման» հիմնադրամի համար:

2. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 ապրիլի 2018 թվականի N Մ- 314 - Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 13-ի N 01.1/14-2/6855-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի ապրիլի 13-ի N Ն2/22.2/4378-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 13-ի N 06/3-4/18888-18 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնությունից ВІВА հասարակական-բարեգործական կազմակերպության կողմից ուղարկված Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված դեղարայքի և պտղի հետազոտման սարքի մոնիտորի (3 տեղ, 16.50 կգ ընդհանուր քաշով, 219,818.62 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, ԵՏՄ բեռ) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո անհատույց հանձնվելու է Արցախի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
27 ապրիլի 2018 թվականի N Մ- 315 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 3)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 13-ի N 01.1/14-2/6854-18 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 16-ի N 06/3-4/19121-18 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի, անհատ բարերար Հայկ Վլադիմիրի Բալայանի (անձնագիր՝ N 4615831330, տրված՝ 27.05.2015 թ.) կողմից ուղարկված Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի (3 տեղ, 57 կգ ընդհանուր քաշով, 124,850 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, ցանկը կցվում է, ԵՏՄ բեռ) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո անհատույց հանձնվելու է Արցախի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության օրենսդրության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՆ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՑԱՆԿ

Մոսկվայից ՌԴ քաղաքացի Հայկ Բալայանի կողմից N94327402 առ 03.04.2018թ.
ավիաբեռնագրի ուղարկված բեռի

